

БІБЛІОТЕКА  
Головного Управління  
по діяльності печаті.

по дѣламъ печати.

## ԳԱՅՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

፩ ቤ ገ ቤ የ ሂ እ ቤ

У У ё є Ѳ Ѵ Ѵ Ѵ Ѵ

## ԿԱՏԱԿ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱԶՈՎ

## ԵՐԵՎԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

*Nunne*

ԹԻՖԼԻԶ  
Ա.ՐԱԳՈՒԻԿ ՄՆԱԾԱԿԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ  
ՊՈՏՃՎԱՆԱՆ ՓՈՂՈՑ, 3

1909

891.99  
U-94

-6 NOV 2011

ԳԻՇԻՐՎԱՆ ՍՍԲԻԼ ԽԵԹ է

Կ Ա Տ Ա Կ

Առաջին անգամ ներկայացրած է Թիֆլիսի քաղաքային  
թատրոնում՝ 1863 թուի Հոկտեմբերի 23-ին:

Հ Ա Ր Ա  
5932

891.99  
U-94

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՐՈՒՄՆԵՐԸ

ԳԻՇԻՐՎԱՆ ՍԱԲՐԸ ԽԵՐ է, կատակ մեկ արարուածով:

ԽԱԹԱԲԱԼԱ, կատակերգութիւն չորս արարուածով:

ՕՍԿՈՐ ՊԵՏՐՈՎԻՉՆ ԷՆ ԿԻՆՔՈՒՄԸ, կատակ մեկ արարուածով:

ԵԽՈՅԻՆ կամ ՆՈՐ ԴԻՈԳԻՆԵՍ, կատակ երկու արարուածով:

ԷԼԻ ՄԵԿ ԶՈՀ, կատակերգութիւն հինգ արարուածով:

ՊԵՊՈ, կատակերգութիւն երեք արարուածով:

ՔԱՆԴԱԾ ՕՉՈԱ, կատակերգութիւն երեք արարուածով:

Ա.ՄՈՒՍԻՆԵՐ, կատակերգութիւն չորս արարուածով:

Բ.Ա.ՆԵՐԻ, ԲՈԽԶՈ, կատակ երկու արարուածով:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԵՐԵՆԻՑ

Ճ-ՕՐՃ ԴԱՆԴԵՆ, կատակերգութիւն երեք արարուածով, նեղինակութիւն՝ ՄՈԼԻՔՐԻ:

Գ Ի Շ Ի Բ Վ Ա Ն

Ս Ա Բ Բ Լ Խ Ե Բ Ե

Կ Ա Տ Ա Կ Ս Ե Կ Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ժ Ո Վ

Հ Ե Զ Ի Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ո Հ Ե Կ Ա Ժ

Թ Ի Ֆ Լ Ի Զ  
Ա Ր Ա Գ Ա Տ Ի Պ Մ Ե Ա Յ Ա Կ Ա Ն Ս Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս Ե Մ Ա Ց Ի  
Գ Ո Ւ Շ Կ Ա Ն Ե Ա Ն Փ Ո Ղ Ա Ց, Յ

1908



3870-86

# ԳԻՇԻՐՎԱՆ ՍԱԲՐԸ ԽԵՐ Է

ԳԻՇԻՐՎԱՆ ՍԱԲՐԸ ԽԵՐ Է

ԿԱՏՈԿ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

ԹԻՖԼԻՔԻ ԹԱՄՐՈՆ, 1863 թ. Հոկտեմբ. 23-ին:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉ ԻՐԱՄԱ-

ՃՈՎ, մասղում ծախող. . . ԱՐՏԱՇԵՍ ՍՈՒՀԱԲԱՍԵԱՆՑ  
ՄԱՐԹԱՅ, նրա կինը . . . . . Տ. ՇԱՀԻՆԵԱՆՑ  
ԿԵՎԵԼ, նրանց աղջիկը. . . . . Տ. ՆՈՒԱՐԴ ՆԱԶԱՐԵԱՆՑ  
ԱՐՈՒԹԻՆ ՃԱՐՏԱՐՈՎ, բաղադ-  
խանի տղայ . . . . . Պ. ՄԱՆԴԻՆԵԱՆՑ  
ՔԻՑԵՒ, իսամ լոմբէւ իրասա-  
ծովի ծառան. . . . . Պ. Տէր-ՍՑԵՓԱՆԵԱՆՑ

Մազանդարներ, երգեր և պարեր:

Անցեր պատահում է Թիմիկում Օսկան Պետրովիչ Իրա-  
սածօվի տանը, 1863-ին:

Թիֆլիզի մի հասարակ սենեակ երկու դռնով՝ ձախ\* ) կող-  
մը և խորքում\*\*): Վերջի դուռը բացվում է դէպի պա-  
տըշգամը: Սենեակի աջ կողմը՝ տախտ, գորգով և մու-  
թաքաներով զարդարած: Խակ ձախ կողմը՝ բազմոց (di-  
van), որի զլիին պատից կախած է հայելի ըստ սովո-  
րութեան: Բազմոցի մօտ երկու բազկաթոռ և գունաւոր  
սփոցով ծածկած սեղան: Այս սեղանի վրայ դրած են՝  
համրիչ և երկու արձաթափայլ աշտանակ հանգած իս-  
տակ մոմերով: Միքանի աթոռներ լացնում են սենեակի  
զարդարանքը: Գիշեր է, սենեակը լուսաւորած է գեռ  
ճրագուէ մոմով, որ հասարակ աշտանակով դրած է տախ-  
տի վրայ, յիտոյ վերոյիշեալ իստակ մոմերով, ինչպէս  
նշանակած է իր տեղը: Երաժիշտների տեղում նստած  
են սազանդարներ, որոնք մինչև վարագոյրի բացուիլը  
նուազում են ու երգում տեղական եղանակներ:

\*) Բեմական ցուցումներում՝ աջ, ձախ պէտք է ընդու-  
նել հանդիսականների զիրքից նայելով:

\*\*) Խորքում, այս դէպում, աւելի ճիշտ է, քան թէ  
դիմացը կամ մէջ տեղը, ինչպէս գործ է ածուած թատրո-  
նական գրուածներիս միքանի բեմական ցուցումներում:

## ՏԵՍԻԼ Ա. ՌԱԶԻՆ

ՄԱՐԹԱՅ, մենակ, տախտի վրայ նստած՝ ճրագի մօտ չի-  
քիլայ է կարում:

Էսէնց բան կ'ուղի՝ իմ մարթն է անում: Աշխարքն  
իրանց ախչիկը մարթու էրիտ ու իմ խիղճ Կէկէլն  
էլի մնում է: Քու դուշմանը՝ թէ մէ էրկու տարի էլ  
էսէնց անց կացաւ, տանը կու քացխի խիղճո: Ի՞նչ  
անիմ, վուր օխտա չիմ կանացի գա իմ իր-ասածի  
մարթումէն: Խան տառմ է՝ ի՞նչ իս շտապում. խան  
տառմ է՝ ջեր\*) էտղադա\*\*\*) վուղ շունիմ: Ով տախո՝  
հազար հազար թումնիր համբրից իր ախչկայ համա,  
'ես\*\*\*\*) կի մէ էրկու հարուր էլ չկանացի խոստանա:  
Օ՛լոս-բօլօս էս մէ ախչիկն ունինք, էլի՛: Իժում ի՞նչ  
էն ճար կարած թաթէլն ասում էր էսօր առուտէ-  
հան, թէ շատ լաւ տղայ է, կ'օսէ, էն թանաքուտո-  
ղինց տղէն. պալատումն է զուրուղ անում, կ'օսէ.  
զուրթ է կայինք շունէ, ամա թաքաւուրիմէն լաւ  
տօնլուղ է զի կալնում, կ'օսէ. Կրիք հարուր թումնով

\*) Ջեր—դեռ, ջեր—անգամ:

\*\*) Կ տառը թաւով նշանակած (՞) պէտք է արտասա-  
նել որպէս Պարսից կամ Թուրքաց Չ կամ Վրացոց ց:

\*\*\*) Ե տառը մակակէտով նշանակած (՞ե ) պէտք է ար-  
տասանել իսկ և իսկ այնպէս, ինչպէս արտասանվում է յի  
գանկը՝ բառի միջում կամ վերջում ձայնաւորից յետոյ. օրի-  
նակ՝ Մա յիս, Գա յի անէ, երկնա յին, եսա յի, և այլն:

կու չինիմ, կ'օսէ: Արա, ի՞նչ մօգօնիմ, վուր իմ մար-  
թուն փափկեցնիմ: Ասում է՝ չէ, չէ, չէ, չէ... ես  
դարդակ չինօվնիկին ախչիկ չիմ տա, կ'օսէ. թնդ  
առուտը տղայ ըլի ու վուղ ունենայ, կ'օսէ: Փնտ,  
փնտ, դիմ փնտ. եարաք ի՞նչ դառաւ էն անիծած  
փուղը: Խիղճ իմ Կէկէլ, նրա բօյին աժէ մէ բաժինք,  
ամա վուր էլի առանց վուղ չէ ըլում... Ը՛մ, վիր  
ննդնին հիմիկան տղէրքը, հըա... է՛հ, էս չիքիլի  
սիրտ էլ չունիմ: (Զիքիլան վայր է ծգում:) Արա, մէ  
տեսնիմ, թէ թուխտն ի՞նչ է ասում... (Նհալու տակից  
խաղալու թուղթ է հանում ու բաց անում:) Գիշիրվան  
ճամփով ովոր ջէկէլ տղայ է գալի... մէքաշ ուրա-  
խայնում է... քա, թուփի-թուփ է, ովոր վուր է...  
Ո՞վ կուլի էրնէկ. կուլի թանաքուտողինց տղէն ըլի՛.  
արա, ինձ ով կու տայ էս բախտը... Քա, չուրս կի-  
կօն էլ մէտի. էս ի՞նչ լաւ վալ դուս էկաւ: Տէր Աս-  
տուծ, Դոն զէվէր մափկ անիս: (Շտապով կամչում է:)  
Կէկէլ, Կէկէլ, քա Կէկէլ:

Կէկէլը մոնում է ձախ կողմի դռնից:

## ՏԵՍԻԼ Բ

## ՄԱՐԹԱՅ, Կէկէլ

Կէկէլ,

Ի՞նչ է, ի՞նչ իս ուղում, զէղի ջան:

ՄԱՐԹԱՅ

Քա, քանի կանչիլ տաս, չիս իմանում:

Կէկէլ,

Զեռիս բան ունէի, վա, ի՞նչ իս ուղում:

**ՄԱՐԹԱՅ**

Մէ էս չուրս կիկօն զնսա տար բալկօնը. աիս, թէ  
ինչ խօսք կու իմանաս քուշումը:  
Կէկէլ.

Ե՞ն, դէղի ջան, դուն ու քու թուխտը. չնրս ասը  
մէտի լաւ է, էլի՛, էլ ինչ իմանամ:

**ՄԱՐԹԱՅ**

Քա, տար մէ, հէնց ապրիս:  
Կէկէլը չորս թուղեր առնում է եւ խորքի դռնից  
շտափով դուրս է գնում պատշաճմը:

**ՏԵՍԻԼ Գ****ՄԱՐԹԱՅ, մենակ:**

Միրտս գլըմփլըմփում է: Ո՞վ Փեթխայինի կա-  
մար-կատար Աստուծածին, մէ շափաթ ամեն օր Քու  
սանդըխաներու վրայ օխան-օխար չէր բորդիկ վու-  
տով դիվիր ու դէվէր կ'օնիմ, թաք Դնն բարեխօսիս  
իմ Կէկէլի համա:

Կէկէլն ուրախ-ուրախ ներս է վազում:

**ՏԵՍԻԼ Գ****ՄԱՐԹԱՅ, Կէկէլ****Կէկէլ, շտափով:**

Էրկու մարթ գնում էին, դէղի ջան, ու մէկն ա-  
սու, թէ մէրաշ հէնց գու քայ, վուր դուն էլ շիմա-  
նաս, կ'օսէ:

**ՄԱՐԹԱՅ**

Հալա, հէնց ապրիս, զուրթ իս ասնեմ:  
Կէկէլ,

**Աստուծ գիդենայ:**

ՄԱՐԹԱՅ, ձեռները բարձրացնելով ու առանձին:  
Մեռնիմ քու զօրութենին: (Բարձր:) Ո՞վ կուլի  
եաբար:

Կէկէլ, վերջի խօսքերը լսելով:

Ո՞վ պիտի ըլի, միր լվացկ անող զուշանը թէ  
կուլի. մէրաշ գալը նա զիդէ:

**ՄԱՐԹԱՅ**

Ի՞ն, խորդիմ նրա շկըլած գլուխն էլ. աճկիրս  
ուսիլ է նրա համա:

Կէկէլ,

Բաս ուրիշ ով պիտի ըլի, դէղի ջան:

**ՄԱՐԹԱՅ**

Էրնէկ գիդենամ, քիզ ով է հարցնում, քա: (Ոտի  
ձայն է լավում: Շտափով թուղեր հաւաքում է ու պահում:) Յօրէն, մամէն էլ տուն էկաւ. Էս կարը մօդ արա ու  
դնա, բանըդ տիս:

Խորքի դռնից մտնում է Օսկանը, վերարկուն վրան զը-  
ցած, պիսին ֆուրաժկայ, մէկ ձեռին կապոյտ թաշ-  
կինակով պաշարեղէն, միւս ձեռին ձեռնափայտ:

**ՏԵՍԻԼ Ե****ՆՐԱՆՔ, ՕՍԿԱՆ**

ՕՍԿԱՆ, կապոցը տալով Կէկէլին:  
Կէկէլ, էս տար կուխնէն, հէնց ապրիս: (Նկատե-

լով չիքիան: ) Հըմա, էլի թաղայ չիքիլա... (Չեռնափայտը Թողնում է խորքի դռան մօտ:) Տօ, հայ ու պանրի պէս իք ուտում, թնչ է:

Վերարկուն դնում է նոյն դռան մօտ աթոռի վրայ,  
իսկ Կէկէլը, կարն ու կապոցը ձեռին, դուրս է  
գնում ձախ դռնից:

### ՏԵՍԻԼ Զ

#### ՕՍԿԱՆ, ՄԱՐԹԱՅ

##### ՄԱՐԹԱՅ

Պւրիչներու պէս դրօշկա ու կալասկա խօմ շիմ  
ուզում:

ՕՍԿԱՆ, ծաղրելով:

Ի՞նչ է ասում... վահ, հիմի էտունք ուզէ... Ափ-  
սնև, վուր մաղով սալօփ էլ շիս ուզում:  
ՄԱՐԹԱՅ, տեղից վեր կենալով եւ մօտենալով Օսկանին:

Հանաքը դէնը, Օ'սկան ջան, ու մէ լաւ բան պի-  
տի ասիմ:

ՕՍԿԱՆ, առանձին:

Ջանը վուր ասաւ, թային դժար բան է ուզում  
ասի: (Մարթային:) Արա, թնչ է, Մարթայ ջան:

ՄԱՐԹԱՅ, առանձին, երեսը խաչ հանելով:

Տէր Աստուծ: (Օսկանին:) Ախար էս տարի էլ թող-  
նինք խիղճ ախչկան. միխկ չէ:

ՕՍԿԱՆ, առանձին:

Վուր ասի: (Մարթային, նստելով տախտի վրայ:) Հըմա, էլի սարքեցիր ճիանուրը՝ դ... (Մարթան վերցնում

է վառած մոմով աշտանակը:) Զահէս մի տանի, քու  
հօրն օղողմի:

ՄԱՐԹԱՅ, աշտանակը դնելով սեղանի վրայ:

Հալա մէ անգաճ գի, թնչ իմ ասում, է... (Գալիս  
է, նստում է Օսկանի կողքին եւ ձեռը նրա ուսին զնում:) Էսօը Թաթէլն էլի էկաւ էն չինօվնիկի համա, 'երիք  
հարուրով կու շինիմ, կ'օսէ:

ՕՍԿԱՆ, առանձին:

Ի'րան տվէք տասչուրս շային: (Մարթային:) Ի՞նչ  
չինօվնիկ:

ՄԱՐԹԱՅ

Ա', էն Թամաքուտողինց տղէն:

ՕՍԿԱՆ, տեղից վեր թոչելով եւ հետզհետէ տաքանալով:

Տօ, ձեռը վի կալ, թէ Աստուծ կու սիրիս մէ, է:  
'ես դարդակ չինօվնիկին ախչիկ շիմ տա, չէ. ինչով  
շիմացար: էլի մէ ունեսոր տղայ ըլի, հա, 'ես էլ մէշը  
կու լլըզամ. թէ չէ 'ես ով, Թամաքուտողին ով.  
լաւը վուր ըլի, իմ ախչիկը չի ուզի: Գժվիլ իմ, վուր  
'ես իմ պէտլած Կէկէլին տիկին-խաղողի ձեռը զցիմ:  
ՄԱՐԹԱՅ

Դուն էտէնց ասա ու անբախտ էն օրը զուքած  
ու զարթքած ման էր գալի:

ՕՍԿԱՆ

Է'տ է ձիր աճկիրը քուացնում, է... Գանա ովոր  
չինօվնիկ չէ, քու մտկումը մարթ չէ: Տօ, էս քու  
չինօվնիկնիրը չին, վուր մէ գրօշի բանի համա մէ  
արասու թուղթ ու թանաք ին խարար անում: 2է,  
քիզ իմ հարցնում՝ էքուց, էլոր, բան է, զուլուղէմէն  
զուս արին էս քու պարուն Թամաք լպլստողին...

իժում խօմ՝ ես պիտի պահիմ նրան... (Ազ ձեռը շարժելով:) Փահ, կու շինվի իմ բանն, էլի՛... Օսկան Պետրովիչը գաղիք ու Թանաք խպղշտողն ուստէ. համ էլ ձեռնիրս կյած առչիւր դուլուղ ըլիմ անում, միթամ նրա հօր ճուրան իմ. ու թէ մէ ջզրած վուխտն էլ բան ասի, պիտի վրէս վուտնիրը քարէ քար տայ ու Ռուեվար ասէ՝ մալչի, մալչի, մօնա շինօվնիկ. ՚ես էլ ի՞նչ անիմ էն վուխտը, պիտի ասիմ՝ պօֆօլուտատ, մինավատ: Հայդա-համ... Զէ, չէ, ՚ես շինօվնիկի հիդ բան շիմ բռնի, ախալէր: ՚ես հէստի վեսայ գ'ուղիմ, վուր նա ինձ պատիւտայ, չէ թէ ՚ես նրան. ինձ պէս վուր դադելու ճամփէն գիդենայ, ինձ պահէ: Ուփրօ լաւ չի ըլի՛, վուր վողոցի տղայ ըլի ու վուր ունենայ, վուր ՚ես էլ գովլըթումը զլդիգլուր գամ:

### ՄԱՐԹԱՅՑ, տեղից վեր կենալով:

Բաս ի՞նչ անինք, յօրէն տասնուոխտը տարին թաշմամիցաւ, տասնուովթումն է խիդմ:

### ՕՍԿԱՆ, նստելով բաղմոցի վրայ:

Վահ, ի՞նչ իս շտապում, գարգակ շինօվնիկին վուր չիմ տալի ախչկաս, աշխարհումը մարթը կ'թլուդ է էլի՛:

### ՄԱՐԹԱՅՑ

Դուն գիդիս, ումնոր գ'ուղիս տնւ: (Նստելով օսկանի մօտ բաղկաթորի վրայ:) Մէ էրկու հարուր թուման վուր ղիմիշ անիս, առուտի տղայ էլ լաւը կու ճարինք:

### ՕՍԿԱՆ

Վահ զլխամեռ էտու վքրումը չէ դիվ. ամա վուր չէ ըլում ջեր, ի՞նչ վայ տամ ՚ես իմ զլուխը:

### ՄԱՐԹԱՅՑ

Էտէնց մէ ի՞նչ դժար ճարելու է քիզ համա էտ փուղը:

### ՕՍԿԱՆ

Ա' կնիկ, գոն հէսար իսկի չիս գիդի: Էրկու հարուր թուման վուր վուղ տամ, հիմի փալաս է, փուրս է, շալիր է, էլի ի՞նչ զահրումար է իմ զլխին. Էս ՚երիք հարուրն էլ կու անց կենայ, իժում մինք ի՞նչով ապրինք:

### ՄԱՐԹԱՅՑ, վշտացած:

Հաղիք ասիս, վուր ախչկատ համա վուղ չիս ղիմիշ անմամ:

ՕՍԿԱՆ, բարկացած, տեղից վեր կենալով:

Համ, ղիմիշ չիմ անում, ձեռը չիս վի կալմի՛:

### ՄԱՐԹԱՅՑ, նոյնպէս:

Բաս վի կալ ու մէ հաց թխողի տու. քու ասածի մարթը իս, ախար, է:

Հարացած դուրս է գնում ճախ դռնից:

### ՕՍԿԱՆ, մենակ: Ծաղրելով:

Բրբբ՛... (Երեսը խաչակնքելով:) Տէ՛ր օղորմած Աստուծ: Տօ, զարմանք կնիկ է էս իմ կնիկը. Էրկու հարուր առւ, ՚երիք հարուր առւ, ՚էնց գիդենաս միլիօն ունենամ: (Ոյս ու այս կողմը երկիւղով նայում էշ:) Աստուծ դիվենայ, դիվ ինձ համա էրկու հարուր թուման մայս չունիմ. ամա էս թաքրուն ձիզ իմ ասում,

օչովու չասիք, թէ չէ տունս կու քանդվի: Գուշանս լիքը վուր տեսնում ին, հինգ գիղին դիփ իմն է: (Երբեմն ման է զալիս, երբեմն կանգնում: ) Քանի տէր ունէ ասլրանքս, ին ՚ես գիղիմ: Է՛սաի առ, էնդի տու. սրամէն (Աջ ձեռը աջ կողմն է ձգում:) վի կալ, նրա բերանը (Աջ ձեռը ձախ կողմն է ձգում:) ծածկէ. սուտ ասա, զնուրթ ասա, անջախ-անջախ ծէրը ծէրին (Երկու ցուցամատի ծայրքը միմեանց է կպցնում:) վրայ իմ բերում: Ախար, (Զեռներն առաջ տանելով:) ով կու գիմ-նայ հիմիկան ապրելուն: Էս պիտի ու էն պիտիմէն զահէս զնաց: Ափսուս չէ վաղուցվան ժամանակը՝, վուր ամեն մարթ իր չափս ու ձիւր գիգէր: Համ, էն վաղ էր, վուր էշը կաղ էր: Էս մօղէքը խօս (Եր հաստ փորը ցոյց տալով:) ճէրք զցեցին ինձ, էլի... Տօ, էրէկ մէկէլ օրը իմ սալսաղ կնիկը վի կալաւ ու թաղա բուռնուսի փեշիքը ծակծըլից. (Կանացի ձայնով:) պիտի առշիւը ջիբիք ունենայ, կ'օսէ: (Եր ձայնով:) Ի՞նչ է՝ ձեռնիրն էսէնց զարսէ մէչն ու (Նար-ծուածքով ձեւացնում է: ) տիտրին, տիտրին (Ծաղր անելով ման է զալիս:) ման զայ: Արի հիմի ու ախչիկ էլ մարթու տու: Ա՛ս, բաժինիք մօգոնող, էն կինքումն էրվիս, վունցոր ՚ես էսաի իմ էրվում: Ի՞նչ անիմ, ի՞նչ չուրը ննդնիմ. վուրդի ճարփմ մէ էրկու-՚երիք հարուր թուման: (Մտածունքի մէջ է ըննուամ:) Առուարի խէրն էլ զնաց. էլի թէ մէ էրկու շայի ճարփում է, էն էլ փօքրթներումը. ամա ինձ փօքրաթն ով է տալի: Ա՛ս, Աստած, Գում էլ դիփ հարուստներուն իս օտկում. մէ միք կուռն էլ դէվէր մտիկ տու, է: (Կատում է տխուր:) Ա՛ս, բաժինք մօգոնող, կինծիա

կոտրվի: (Նարժուածքով արտայայտում է, որ զանազան բաներ է մտածում:) Է՞հ, չէ... Կուլի ըլլի... 2է, էս Էլ չշլաւ... Հրամ... համ... (Յանկարծ ուրախ վեր է թրոցում տեղից եւ ճակատին խփերով:) Ախմախ, ախմախ. տօ՛, Էլ լինչ իմ հիռու ման գալի. այ հառ թրէաթրը. արի, շալիշ գամ, իջարով վի կալնիմ. մէ էրկու հարուր թուման վնանց չիմ դաղի: Էստու վրայ լաւ փող- րաթ կուլի՞. Էլ վունց զալօգ գ'ուլէ, վունչիչ: Մէ Արութինին կանչիմ. նա էստունց ճամփէն ուփրօ լաւ պիզէ: (Կանչում է:) Քիտէսալ, բիճօ: (ՅուՇեազ, ծոյշո! —Քիտէսի, տօ՛:)

ՏԵՍԱԿԱՆ

ՕՍԿԱՆ, ՔԻՑԵՍԻ

**ՕՍԿԱՆ, ՔԻՄԵՍՈՒՆ, որ մտնում է խորքի դռնից:**

Բիմօ, չեմ դուքնիս գլւէրպիթ, բօմ ախալքաղլա  
բիմի զիս, իցի՞։ (Ճոշո, ից ջայնոն ջայրօտ, հռմ  
աճալըցածու ծոյնո նու, ուրո?—Տօ, իմ դուքնի կշտին  
վուր չէնէլ տղայ կայ նստած, գիդիս։)  
Քիչէկի

Թափա արա, չենի ճիրի մէ: (Խացա առա, Ցյոն քորո  
թյ.—Վանց չէ, շարսդ տանիմ:)  
Օպկան:

Գուշին լոմ չեմ-վիս սաախալումէ մօվաճրէվինէ:  
(Ճշնուն հռմ Մենցուու և աճալութ թուզաժրացնո՞ւ. — Երկդ  
վուր քիե համա ախալումացու կարիի տփի նրան.)



## ՔԻՑԵՄԻ

Կի բատօնօ, կի բատօնօ: (Ճ ծառոնօ, յո ծառոնօ!  
—Հրամիլ իս, պարուն, հրամիլ իս:)  
ՕՍԿԱՆ

Ախլաւ չափրինէ դա ութիսարի, բօմ աք մօմբձանդէս. ձալիան սաճիրօ սաքմէ մաքփս, թքօ: Մալէ, չեր գուքանի ար էքնէրա-դակէտիլի: (Ճելաց հաօրծոնց զա շտեսարո, հող այ մոծանցոյք; ժալուն սայնոր սայն մայզը, տյո. Թալց, չըր ջոյենո առ յընեծա ձայցըոլո. —Հիմիսկ էւէտ դէվէր վազի ու մասա նրան, վուր էստի շնուր բերէ. խիստ հարկաւուր բան ունիմ, ասա: Զնոստ, չեր գուքանը շի ունենայ կոխպած:)

## ՔԻՑԵՄԻ

Ամ ծութշի, շինի ճիրի մէ: (Ճ ֆյուշո, Շենո յուրօ թյ.—էս նմուտիս, շարդդ տանիմ:)

Գնալիս մէկ անգամ փոշտում է:  
ՕՍԿԱՆ

Այ, զահրումար... երթից, բիճօ: (Ճ նաձրուցառ!.. Յհուուց, ծոյշու!—Այ, զահրումար... Մէկ էլ, տօ:)  
ՔԻՑԵՄԻ

Մէտի արդա մէցխինկվէրա, մղա ջան: (Ճ ջո արձա թյունցանցածա, ար չան.—Էլ շէ զալի փոշտալս, մղա ջան:)

ՕՍԿԱՆ, Քիտէսու գլխին խփում է:

Մէ շին գէուրնէրի, երթս նու դասցէմինէր, թօրէմ մօգկլամ: Ենադի մալէ, չէ վիրօ: (Ճ Շեն ջյուծնեցօ, յրուս նշ ջաւայմոնցօ, տորհը մոցյլամ. Վազո մալց, Շե զուրօ!—’ես քիզ ասում իմ՝ մէկ մի փոշտայնի, թէ շէ կու սպանիմ: Դնա չուստ, մաւանակ:)

Քիտէսին դուրս է վազում խորի դոնից:

## ՏԵՍԻԼ Թ

ՕՍԿԱՆ, մենակ:

Այ, քու տննն Աստուձ քանդէ: Էս սաբրը լաւ չէլաւ. ամա զիշիրով խէր է, ասում ին... չայ-թէ լաւ բան միտս էկաւ: Հիմի խալիսը զնամիշ կ'օնէ ինձ. կ'օսին՝ թէ հառ թրէաթըը ինչ նրա խիլի բան է: Տօ, էստուրն ինչ խիլի գ'ուզէ. խաղողը կու խաղայ, 'ես փուղիրը չիրս կ'օծիմ: Կ'օսին՝ Օսկան Պետրովիչ, էս բանը խաղցու, 'ես էլ ինչ իմ հոքում, էս կու խաղցնիմ: Հալա մէ լաւ հէսար անիմ, հուրը չը ննգնիմ: (Համրիչը վեր է առնում, նասում է ու երկար հաշիւ անում:) Վից ու վից՝ տատէրկու. քսանուշուրս. քառունութ. էս հինգ թուման. էս տասը թուման. էս շուրս քսան: Էսկանց գուս գանք, մղա ջան, քսան մէկ ու տասն էլ մէկ, կու մնայ խուն. խունէմէն գուս գանք քառսուն, կու մնայ տասը: Քսան չէր տասը, էս քիզ խստակ էրկու հարուր թուման: (Ուրախ վեր է կենում համրիչը ձեռին: ) Դրուստ խէրի բան է, քու արիւր, դագումն աշքարա է: Արա, նուր բան ու միը քաղաքը: Էն օրը բիլէթ առնելու էնինց մօդ էր էլի խալիսը, կ'օսէիր, թէ թազա գելաքնուր է էկի: (Համրիչը դնում է սեղանի վրայ:) Աստուձ զիդնայ, լաւ բան մօգոնեցին էս միր ուսում առածնիրն, այ: Ամա նրանք էլ խիստ խիլիին զու ին տալի խանդիսան. մալթ իրմէն պիտի կարի, ուրիշին օտկէ, կ'օսէ: Տեսնիմ, թէ նկ է դուռս թիթըխիեցնում ու

ասում թէ՝ Օսկան Պետրօվիչ, բռնէ էս էրկու հարուր թումանը, ախշկատ մարթու տու: Արա, աւտալու է էս հանգի բանը՝ 2է, ձիր արիւը, շատ կարթալը գօգրին (Գուշից ցոյց տարով:) զարար է անում: Հիմի ՚ես, վուր ունիթըրստա չիմ էլի, խիլը չունիմ: մէրաշ մէ արասու մագիէր հինդ շայի շտամ: Է՛հ, մախլաս. էլի Տէրը բարի տայ էս ուսում առածներուն, թէ չէ ինձ համա վարդի էր բաց ըլում թրէաթրի իջարէն: Ա՛խ, թէ մէ զլուխ էկաւ էս բանը, դնն մտիկ իժում Փուքսավատօվի հալը: (Ման է զայս երգելով:) Լամու լամու, թրէաթր լամու. լամու լամու, իջար լամու, եար խոթամ: (Աւելի չպէտք է երգել:) Հայ-թէ կու խօսին փողոցումը. կ'օսին՝ տօ, էս անիծած Օսկան Պետրօվիչը վնրդի գթաւ էս խէրի բանը: Արա, ում խիլքումը զու քէր հառ թրէաթրի իջարէն: (Ծիծաղում է ու ցուցամտի ծայրը ճակատին խփելով:) Փիլսովիի գօգրա իս, գօգրա, Օ-սկան Պետրօվիչ: Հայ-թէ ախշկատ բանը շինվեցաւ: (Մոտենում է ձախ դրանն ու կանչում է:) Կէկէլ:

## ՏԵՍԻԼ Ժ

ՕՍԿԱՆ, ԿէԿէԼ

ԿէԿէԼ, ներս զալով:

## ՕՍԿԱՆ

Մէ, հէնց ապրիս, հիմիսկէւէտ էս օթախը կարքի րի ու կարտօֆիլի մնումիրը վառէ: էտ շամդանն էլ ունդ արա:

ԿէԿէԼ

Հօնաղնիր պիտին գա, մամի ջմն:

ՕՍԿԱՆ  
2է, մէ տղայ է, հիղը բան ունիմ:

ԿէԿէԼ

Ո՞վ է, մամի ջան:

ՕՍԿԱՆ

Տօ, քիղ լինչ, ովոր վուր է, զուն բանըդ տիս. ՚ես էլ հէնց հիմի գալիս իմ: (Երգելով զնում է:) Լամու լամու, թրէաթր լամու. լամու լամու, իջար լամու. եար իսթամ:

Գուրս է զնում ձախ դոնից:

## ՏԵՍԻԼ ԺԱ.

ԿէԿէԼ, մենակ:

Հէրս լինչ ուրախ է, շատ վուխտ է խաղ չէ ասի: (Սինեակը կարգի բերելով:) Իմ գէղի փախն էլ լինչ լազ զուս էկաւ. մէրաշ հէնց զու քայ, վուր զուն էլ շիմանաս, կ'օսէ: է՛րնէկ, ով պիտի զայ: Հիմի վուր երազս կատարին. միթամ մէ սիրուն տղայ ասուս էր հօրս, վուր քու ախշիկը մուքթ ուզում իմ, կ'օսէ, ու մէրաշ ինձ նշնեցին... Արա, զարդը կտրվիլ է հիմիկան տղերանցը. օգունդ վնրդ ասա նրանցը, թէ-գուզ ախշիկը քաշալ ըլի: (Խստակ մոմերը վառում է, ճրագուն հանգնում ու աշտանակը թաքցնում, յևոյ հայելու մէջ կոկում է:) Ի՞նչ ուրախ ի՞մ. էլախտվան խաղը լաւ խաղ է, այս: (Ծոցից հանում է մի ծալած թուլթ:)

«Ա'լս դիլաւ, դիլաւ»-ի ձէնի վրայ է ասած: (Երգում  
է, սաղանդարները ճայնակցում են:)

«Հայոց աղջիկներ, ձեր հնդուն մատաղ.

«Երբ միտս էք գալիս, ասում եմ ես՝ ախ.» ևայլն:  
Երգը աւարտում է եւ նորից հայելու մէջ կոկում:  
Այդ միջոցին օսկանը ներս է մտնում ծախ դռնից:

### ՏԵՍԻԼ ՃԲ

ՕՍԿԱՆ, ԿԵԿԵԼ

#### ՕՍԿԱՆ

Յօ, Էտէնց իս կարքի բերում օթախը:  
ԿԵԿԵԼ

Դիմ սարքեցի, մամի ջան. արա, մամիկ, լնչն է  
պակաս:

#### ՕՍԿԱՆ

Դնա, լաւ է, դէղիս օտկէ էնդի:  
ԿԵԿԵԼ դուրս է զնում ծախ դռնից:

### ՏԵՍԻԼ ՃԳ

ՕՍԿԱՆ, մենակ:

Յօ, էս հալիլէն վուր չըլի, ինչ պիտին անի ախ-  
չըկիբը. Ե՞ն, իժում ուրիշ բան կու մօքոնին: Ամա  
իջարէն զլիէս չէ դուս գնում, չչ. քանի շատ իմ  
փիքը անում, էնդաղա դաղումը շատանում է... Ասում  
էի՝ էրկու հարուր թուման կու դաղիմ: էրկու հա-

րուրն ինչ է. բարաթ-բարաթ բանիր է պառուտ զալի  
մտկում: Մէկ էս վուր՝ հառ թրէաթրի համա ինչ  
հարկաւուր է, վուր առշիւր վաթսուն հոքի նէմէնցու  
մուղիկանանիր ըլին նստած ու տիրու-տուրն, տիրու-  
տուրն բանիր ըլին ածում. ուվիր լաւ չի ըլի, վուր  
մէ էրկու զաստա զուգուկչիր ըլին նստած էնդի ու  
լաւ սահարի, ուստ, հէլդարի, նազմ, մավարան, մու-  
խամբագ ըլին ածում. էս նավիր կու դուր զայ խալ-  
խին, համ էլ չուրս ջէր էժան կու նստի: Մէկ էլ էս՝  
վուր զիփ սորված տղէրը չմօդ անիմ խաղալու համա,  
բազազսանի տղէրքը նրանցմէն պակաս կու խազմն:  
Մէ զայ էն ձարտարօվը: (Նայում է ծոցի ժամացուցին:)

Յօրէս ութը կու թամամի: Ինչի՞ ուշայաւ հէր օխ-  
նածը: Ա՛յ, իմ խարջ տղայ. բլրուէ, բլրուլ, դրուստ:  
Թէ մէ էրկու հարուր թուման աւելի կոննենամ, ձեռ-  
նէմէս չիմ թողնի, ամա վմւրդի է էս սահաթիս: Ա՛յ,  
բաժինք մօգոնող, Սաթաէլի չանդերով պատումիս:

ԿԵԿԵԼ ներս է մտնում խորքի դռնից:

### ՏԵՍԻԼ ՃԳ

ՕՍԿԱՆ, ԿԵԿԵԼ

#### ԿԵԿԵԼ

Մամի ջան, մէ ինչոր տղայ է հարցնում քիդ.  
ասում է՝ Արութին ձարտարօվն իմ, կ'օսէ:

ՕՍԿԱՆ, ուրախ:

Ասա զայ, ասա զայ, 'ես էլ նրան իմ մնում:

## ԿԵԿԵԼ

Արի, մամի ջան, գնն ասա. բիջը ջեր չէ յիդ  
Եկի, ու գէտէն էլ սարդըփումն է: Մէկ խօսեցայ էն  
տղի հիդ, հէնց գիդէի ամութու գիդինը մտայ:

## ՕՍԿԱՆ

Տօ, գնն ասա՝ համեցէք իմ ասում, է. գէլ լոմ  
չէ, վոր կուլ տայ: Իժում չայ էլ կու բերիս միդ համա:  
Կէկէլը զուրս է զնում խորքի դռնից կավիրներն  
ուղղելով:

## ՏԵՍԻԼ ԺԵ

## ՕՍԿԱՆ, մենակ:

Տօ, զարմանը խալիս է էս միր խալիս. Փռան-  
զըստնու ամեն մօգէքը սորվեցան ու քաշաքավարու-  
թինը չէ: Թէ ամութէմէն շատ ին քաշվում, էն կրի-  
նոլինիմէն ամանչին, վոր հէնց գիդենաս շուրտվանց  
բզիալէք ըլլին: (Յետ է նայում:) Էս ինչ էլան... մէ  
տեսնիմ... (Գուրս նայելով խորքի դռնից:) Դիվիր է գա-  
լի: (Նկատելով իր վերարկուն:) Էս էլ էստի է թողի...  
Վերցնելով վերարկուն, շտապով զուրս է տանում  
ձախ դռնից. խորքի դռանը երեւում են՝ առաջ  
Կէկէլը, յևոյ Արութինը:

—∞—

## ՏԵՍԻԼ ԺԶ

## ԿԵԿԵԼ, ԱՐՈՒԹԻՆ

## ԿԵԿԵԼ

Համեցէք: (Այս ու այն կողմը նայելով:) Յօրէս մա-  
մէն զու քայ. Էստի մուլափի տուէք: (Յոյց տալով բաղ-  
մոցը:) Համեցէք...

Արութինը զլում է տալիս, Կէկէլը պատասխանում  
է եւ զուրս է զնում ձախ դռնից:

## ՏԵՍԻԼ ԺԵ

## ԱՐՈՒԹԻՆ, մենակ: Փոքր լոռութիւնից յետոյ:

Ա'ս, ինչ սիրուն է: Իմացիլ էի, վոր լաւ ախշիկ  
է, ամա չէի գիդի, թէ էսէնց անտիկա է: (Առաջ զա-  
լով:) Զինը զրուստ սրտումն նստեցաւ: Էնդուր էլ դիփ  
ասում էին ինձ՝ թէ կնիկ զ'ուզիս, կ'օսէ, սրա հանգի  
ախչիկ չկայ քախկումը, կ'օսէ: Ա'ս, 'ես սրա հորուն  
մեռնիմ, բօյին շիմշատ ըլլի հէնց գիդենաս: Ամա  
էրանի գիդենամ, թէ էս Օսկան Պետրօվիչն ուր է  
կանչի ինձ... Թէ բան ունէք, ինչի՞ փողոցումը չասաւ:

Օսկանը մտնում է ձախ դռնից:

—∞—

## ՏԵՍԻԼ ԺԸ

ՕՍԿՈՆ, ԱՐՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԹԻՒՆ

Բարի գուն, Օ'սկան Պետրօվիչ:

ՕՍԿՈՆ

Օ՞հ, բարով, պարուն Արութին. ինչի՞ ուշացար:  
ԱՐՈՒԹԻՒՆԴուքանս, խօմ գիդիս, ուշ իմ կոխպում... (Մի-  
մեանց ձեռն են տալիս:) Ի՞նչ հարկաւոր բան ունիս:

ՕՍԿՈՆ

Այ, արդ անիմ, ախալէր. (Ճրաւիրելով նրան դէպի  
բազմոցը:) Համեցէք նստի... (Արութինը պատրաստվում  
է բազմոցի մօտ դրած բազկաթորի վրայ նստելու.) Վա,  
դիվանի վրայ համեցէք:

ԱՐՈՒԹԻՒՆ, նստելով նոյն բազկաթորի վրայ:

Դիփ մէկ է, Օ'սկան Պետրօվիչ, էսէնց էլ լաւ իմ:  
ՕՍԿՈՆՔու քէփն է... (Նստում է տախտի վրայ:) Մէ լաւ  
բան իմ զթի, պիտիս օտկի, Արութին ջան. քու լա-  
ւութինը կու վշարիմ:

ԱՐՈՒԹԻՒՆ

Ջնկատ աճկիս, ի՞նչ զուլուղ կայ. հրամայէ, Օ'ս-  
կան Պետրօվիչ:

ՕՍԿՈՆ

Մէ մսա, լմա բան մօդա չէկաւ հառ թրէաթրը՝  
ԱՐՈՒԹԻՒՆ

Հալբաթտա, առկի պայծառութին է:

ՕՍԿՈՆ

Հա, ամա մարթ վուր ուզենայ՝ խէր կու տեսնէ  
էս բանումը:

ԱՐՈՒԹԻՒՆ, առանձին:

Ի՞նչ է ասում: (Օսկանին:) Վա՞նց թէ խէր կու տես-  
նէ. չիմ իմանում, Օ'սկան Պետրօվիչ:

ՕՍԿՈՆ

Դիդի՞ս ինչ է, ախալէր. 'ես ուզում իմ հառ թրէա-  
թրը իջարով վի կալնի: Խէրի բան է, զանա:

ԱՐՈՒԹԻՒՆ, առանձին:

Դժվիլ է: (Օսկանին:) Հանաք իս անում, Օ'սկան  
Պետրօվիչ:

ՕՍԿՈՆ

Հանաք կի չէ, զուրթ իմ ասում, քնաւ արիւր. քու-  
նը սուտ չգիդենաս, իմ արիւրն իմ ասում:

ԱՐՈՒԹԻՒՆ, վեր է թոշում տեղիցն ու առանձին:

Վայ մէ, խիլքէն էլիլ է:

ՕՍԿՈՆ

Վայ, ի՞նչ իս արմնում: Զիս գիդի, վուր ամեն  
բանումը փուղ կու դադվի՞, օզոնդ մարթ ճամփէն  
գիդենայ:

ԱՐՈՒԹԻՒՆ, առանձին:

Քու զնչմանը. ախսուս Օսկան Պետրօվիչ: Ամա  
ինչ ախչիկ ունիք. 'ես նրա հոքուն մեռնիմ: (Նստելով,  
Օսկանին:) Հալբաթտա ամեն բանումը փուղ կայ, ամա  
մէրաշ էնդու վրայ արմցայ, վուր ուրսոր զնացի՞ հառ  
արէատր, հառ տրէատր, զնախս զնաց, էլի՞ էլ օչով  
վունց բան ունէ, վունց զուրծ: Բաս իստակ մտկումդ  
դրիլ իս, վուր իջարով վի կալնիս:

## ՕՍԿԱՆ

հստակ. ու էն իմ հարցնում՝ խէրի բան է, թէ չէ:  
ԱՐՈՒԹԻՒՆ, առանձին:

Խիղճ մարթ. արի կ'օսիմ, թէ խէրի բան է, աես-  
նիմ, իժում ինչ կ'օսէ: (Օսկանին:) Վահ, խէրի բան  
վուր շըլի, ուր կու մօգօնէին:

## ՕՍԿԱՆ, առանձին:

Մայիկ թէ զնւրդի է միտկը հասնում: (Արութինին:)  
Ես էլ էտ իմ ասում. ամա ի՞նչ իս կարծում, միք  
բազաղխանի տղէրքը, վուր ուղինան, չին կանա հառւ  
թրէաթրը խաղա:

ԱՐՈՒԹԻՒՆ, առանձին, զարմանք է արտայայտում:

Վահ, բաս ի՞նչացու է միք բազաղխանէն. միք  
կաղզովի շկօլէն էլ էն է, էլի... Այ' Բանրակլնց Պե-  
տօն, Մահուրինց Մտեպկօն, Զիթումինց Դարչօն,  
Կանկօխնց Միխօն. հիմիկվան խաղացողներու վրայ  
պակաս չին խաղա:

## Առանձին դէմքը ծամածում է:

## ՕՍԿԱՆ, առանձին:

Ի՞նչ առիս՝ սա զիդէ: (Արութինին:) Բաս տարէնը  
մէ քսան-եալսուն թուման վուր ունենան, խանդէ-  
խան կու խաղան հառւ թրէաթրումը:

ԱՐՈՒԹԻՒՆ, առանձին:

Խիղճ օսկան Պետրօվիչ: (Օսկանին:) Վահ, ջանհնե-  
րուն չի վուս զա. եալսուն թումնով ես էլ կու խա-  
ղամ ու:

## ՕՍԿԱՆ, տեղից վեր է թոշում ու առանձին:

Այ' վուրի զադը զիդացող: (Արութինին:) Է՞հ, զնւրդ  
կու խաղա:

## ԱՐՈՒԹԻՒՆ, առանձին:

Աւտում է խիղճը: (Օսկանին:) Բաս չիմ խա...  
Զախ գոնից կէկէլը արծաթեայ սկուտեղով բերում է  
թէյ եւ պարսիմատ:

## ՆՐԱՆՔ, ԿԵԿԵԼ

ՕՍԿԱՆ, Արութինին, որ շփոթուելով ոտի է կանգնում,  
մինչդեռ կէկէլը թէյ է առաջարկում նրան:  
Համեցէք, Արութին ջան:  
ԱՐՈՒԹԻՒՆ, Օսկան:

Զեր հրամանքդ, Օսկան Պետրօվիչ:

## ՕՍԿԱՆ

Վահ, վահ, գէթաղվա... (Արութինը վերցնում է մի  
բաժակ, զլուս տարով կէկէլին, որ միւս բաժակը տանում  
է դէպի օսկանը:) Լաւ, կենայ էտի ստոլի վրայ... (Կէ-  
կէլը բաժակն ու պարսիմատը սեղանի վրայ է դնում:  
Արութինը աչքը չէ հեռացնում նրանից: Առանձին:) Ի՞նչ  
խիստ է տնդղում. թային համեցաւ... Կուլի վուրդ՝  
Աստուծ օղորմայ:... (Կէկէլին, ցածր:) Մուրաբա էլ մօդ  
ըի, մաս էնդի...

Կէկէլը, զատարկ սկուտեղը ձեռին, դուրս է զնում  
ձախ գոնից:

## ՏԵՍԻԼԻ

ՕՍԿԱՆ, ԱՐՈՒԹԻՒՆ

ՕՍԿԱՆ, նատելով:

Բաս էտէնց, Արութին ջան, կու խաղաս, էլի:  
Արութին, նոյնպէս:

Վահ, ինչի՞ չիմ խաղա... Անմիզ, անգէթ փուր  
եաբսուն թուման դաղիմ, բաս չիմ խաղա... Դ'ուղիս,  
քսան-եաբսուն թումնով էրկու հարուր տղայ ճարիմ:  
ՕՍԿԱՆ, առանձին:

Այ իմ խարջ փեսէն. ալի, փուրու: (Արութինին:) Օ՛հ,  
Աստուծ օխնէ քիզ, Արութին ջան. բանս կու շինվի...  
Քու մէ օրը հաղար անէ ու մուրազիտ համնիս, փուր  
ինձ էտէնց ուրախացրիր:

ԱՐՈՒԹԻՒՆ, առանձին:

Դնութ աւտաց. խի՞ դմ մարթ. ախչկան ով տի-  
րութին կ'օնէ հիմի: (Օսկանին:) Թէ քանըդ էտու վրայ  
է, հալբաթտա շինած է: (Առանձին:) Արի սուտ մէ  
քանի հանդը խաղամ, տեսնիմ ինչ կ'օսէ. համ էլ  
կուլի ձէնիս վրայ էն ախչիկն էլի էրևայ: (Օսկանին:)  
Արա՞ ում հանգը գ'ուղիս, փուր խաղամ:

ՕՍԿԱՆ

Աբա, հոքուտ մեռնիմ:

ԱՐՈՒԹԻՒՆ, վեր կենալով տեղից:

Այ, օրինակ ասիմ քիզ Դալալ Ղաղօի հանգումը:  
(Ներկայացնում է:) «Այս, իմ օղորմած հոքի թիձա  
«Կանկօ... էլ Սաղմուսը, Ասմաւուրքը ու դիփ տէր-  
«տէրներու գրիրը, ասում է, փուրուն է:» \*

ՕՍԿԱՆ, առանձին:

Վուր ասում իմ՝ բլբուլ է:  
ԱՐՈՒԹԻՒՆ, որ նոյն միջոցին յետ նայեց ծախ դռան կողմը:  
Վունց է, նրանց վրայ վիս իմ ասում:

ՕՍԿԱՆ

Փիս կի չէ, ուփրօ լաւ իս ասում. ամա էս է,  
վուր Դալալ Ղաղօն հաստ փուր ունէ ու դուն բա-  
րակ իս:

ԱՐՈՒԹԻՒՆ

Վահ, հէնդաղա բալիշ կու դարսիմ փուրիս վրայ,  
փուր Ալիխանի ուսմբին դառնայ:

ՕՍԿԱՆ

Համ... գանա էտունք էլ կայ:

ԱՐՈՒԹԻՒՆ

Վահ, բաս վունց գիդէիր:

ՕՍԿԱՆ, առանձին:

Գիդէի, փուր չնուքով տղայ է. (Արութինը դարձեալ  
նայում է գէտի ծախ դուռը.) ամա էտէնց չէի ճանչնա:  
Այս, մէ աւելի էրկու հարուր թուման: (Արութինին:)  
Բարաքալա, Արութին ջան. տեսնում իմ, փուր  
թրէաթրի բանիրը զուն նեքսի տկերէմէն իս գիդացի:  
ԱՐՈՒԹԻՒՆ

Բաս վունց կու ճանչնէիր ինձ: Հիմի գ'ուղիս էն  
թաքաւուրի հանգը՝ սիրելնի հիդ փուր խօսում է:  
(Ներկայացնում է:) «Ես քիզ սիրում իմ, ասում է,  
«եար. ամա թէ դուն ինձ չիս սիրի, ես ջուրը կու

\*.) Այս ու հետեւալ երկու տեղ չակերտներով նշա-  
նակած խօսքերն ասուած են Պ. Սեղբակ Մանդինեանից, որ  
առաջին անգամ կատարեց Արութին ձարսարօվի դերը:

«ննզնիմ, ասում է. խօ զիվիս, վուր ՚ես էտթավուր  
«խասիաթ ունիմ», ասում է:

**ՕՍԿԱՆ,** առանձին:

Դրուստ կու ըուրքէ թրէաթրը, ձիր ալիւը: (Արու-  
թինը կրկին նայում է նոյն դասն կողմը:) Զանում սան,  
բազազիանա... Լազզաթ: (Արութինին:) Օ՛խ, Արութին  
ջան, սիրտ դաղեցիր, էլի՞... Ափէրում:  
**ԱՐՈՒԹԻՆ,** առանձին:

Իմ սիրան էլ դաղվեցաւ: (Օսկանին:) Էստու վրայ  
լաւ-լաւը գիղիմ, Օ'սկան Պետրօվիչ: (Առանձին:) Արա  
թէ մէկ էլի դուս գայ... Ղուրթ, լաւ միտս էկաւ:  
(Օսկանին:) Ա՛յ, գ'ուղիս, հիմի Սամէլի հանգը խաղամ,  
իր հէր Վահանին վուր սպանում է: Դուն էստի  
կանզնի, միթամ Վահանն իս: (Օսկանին կանզնեցնում  
է բեմի մէջ տեղը, երեսը ծախ կողմը դարձած, եւ նրա  
ձեռնափայտը գեր առնում:) Էս ջօսին էլ միթամ իմ  
թուրն է: (Խնքը կանզնելով նրա գէմ առ գէմ, ներկայացնում  
է շատ բարձր ծայնով, փայտը ձեռին խաղացնելով ու  
հետզիւտէ առաջ զնալով գէպի Օսկանը:) «Ես քրիստոնայ  
«իմ, ասում է, դուն թուրք իս, ասում է. ՚ես վուրթի  
«իմ, ասում է, դուն հէր իս», ասում է: (Կէկէլը քաղց-  
րաւենիթով սկուտեղը ծեռին մտնում է ծախ գոնից եւ  
շփոթուած իսկոյն յտն է դառնում:) «Ամմա գուն, ասում  
«է, իմ ասկս ու հաւատս չիս սիրում, ասում է, բաս  
«մնուի լոթիանա», ասում է:

Օսկանը յետույթ քաշուելով մինչեւ տախտը, վերջը  
վրան վայր է ընկնում. Մարթան ու Կէկէլը ներս  
են վագում: Արութինը շփոթուած՝ փայտը ձե-  
ռից վայր է ձգում:

**ՏԵՍԻԼԻ ԻՍ**

ՆՐԱՆՔ, ՄԱՐԹԱՅ, ԿէԿէլ,

**ՄԱՐԹԱՅ**

Վայ, քուանամ ու կուրանամ ՚ես. էս ի՞նչ խա-  
րար է:

**ԿէԿէլ,** օսկանին:

Մամի ջան, մի վախենա, ջօսին ձեռնէմէն վէր զցից:

Արութինը, սիրով արքած, անդաղար նայում է Կէկէլին:

**ՕՍԿԱՆ,** ծիծաղելով:

Ա՛յ սարսաղնիր: (Արութինին:) Օ՛հ, շատ ապրիս,  
Արութին ջան:

Ծիծաղից շունչը կրկնում է: Մարթան ու Կէկէլը  
զարմացած նայում են երեմն Օսկանին, եր-  
բեմն Արութինին:

**ԱՐՈՒԹԻՆ,** առանձին:

Սուտը սուտ է, էլ ՚ես առանց սրան չիմ կանա  
ապրի. հալբաթ իմ բախտն է:

**ՄԱՐԹԱՅ**, օսկանին:

Քա, առու կինաղամ սիրտս զնաց. մէ ասա՞ էս  
ի՞նչ բան է:

**ՕՍԿԱՆ,** Մարթային, շարունակելով ծիծաղը:

Ճօ, մէ զլիէմէս ձեռը վիկալ, քու հօրն օղորմի,  
է: (Արութինին:) Օ՛հ, զօրանաս, Արութին ջան:

Մարթան ու Կէկէլը զարմացած նայում են միմեանց:

**ԱՐՈՒԹԻՆ,** Մարթային:

Հրա, դէղի ջան, ի՞նչ վախեցար. հանաք էի ա-  
նում, ամա թէ դուրթը գ'ուղիս՝ (Օռանձին երեսը իսա-  
հու. ՍԱՅ. ԽԵՐ Է

շակնելով: ) ձիր ախշկայ համա լաւ փեսայ իմ ճարի:  
Կէկէլը իսկոյն դուրս է փախչում ճախ դռնից ու  
այնտեղից ծածուկ ականջ է դնում:

**ՕՍԿԱՆ,** տեղից վեր թռչելով, Արութինին:  
Ի՞նչ... փեսայ:

**ՄԱՐԹԱՅ,** Օսկանին:

Քա, էս ումն իս տուն թողի, վուր հիմի մաս-  
խարա էլ է գցում:

**ՕՍԿԱՆ,** Մարթային:

Մուլափ, դուն հալա ձէն մի հանի: (Արութինին:  
Ի՞նչ ասիր, ի՞նչ... փեսայ:

**ԱՐՈՒԹԻՒՆ**

Հա, Օսկան Պետրօվիչ:

**ՕՍԿԱՆ**

Արա, էտ լաւութինն արա, էլլի. ո՞լ է, ո՞վ:  
**ԱՐՈՒԹԻՒՆ**

Մէ ինձ պէս տղայ է. կու տաս ախշկատ:  
**ՕՍԿԱՆ**

Ի՞նչ վուրթին իս, Արութին ջան... Քիպէնին կու  
տամ էլ ու կայինքս էլ չիմ ինայի... Ո՞վ է. ասա ու  
պըծի:

**ԱՐՈՒԹԻՒՆ**

Հինց ես իմ, ի՞նչ կ'օսիս... ի՞նչ կու տաս, քու  
բէփն է:

**ՕՍԿԱՆ**

Ղարթ:

**ԱՐՈՒԹԻՒՆ**

Իմ արիւը գիգենայ, զուրթ իմ ասում:

**ՕՍԿԱՆ,** վրայ ընկնելով Արութինին:

Քու հաքուն միոնիմ, փեսայ ջան, (Փաթաթվում է

ու համբուրում: ) մայինց քիզ կու սիրէի ու Աստուձ էլ  
քիզ ինձ էրիտ... (Կանչում է:) Կէկէլ, Կէկէլ... (Կէկէլը  
երեւում է ճախու դռան շնմբում: ) Ա'րի, արի, Էստի արի:  
(Կէկէլը ամաջում է եւ գժուարանում: ) Ա'րի իմ ասում, Է:  
(Գնում բռնում է նրա ծեռը եւ առաջ բերելով, դիմում է  
Արութինին: ) Հըա, Վարթիան նիւթի ծիրացնէ: (Արութինը  
միաբուրելով: ) Աստուձ ձիզ միասին ծիրացնէ: Արութինը  
համբուրում է Կէկէլին: ) Բարի սահաթի ըլի, Վարթիան  
Աստուձ անփօշիվնելի անէ... Վարթի իմ կայինքը ձիրն  
է ու ձիրը... (Օսկանին: ) Ա'յ լոթիանա բան... (Զեռները  
Գուհարացնելով: ) Գուհանամ Քի, Տէք. աղանչաքս լսե-  
ցիր... (Մարթային, որ զարմանքից մնացել է բերանաքաց: )  
Վահա, ի՞նչ իս էտի ցից էլիլ. տօ, արի, օխնէ, Է:  
**ՄԱՐԹԱՅ,** Օսկանին:

Ախար մէ շնս ասի՝ ո՞վ Է:

**ՕՍԿԱՆ,** Մարթային բաշելով Արութինի կողմը:  
Տօ, արի, օխնէ իմ ասում, Է. խիստ լաւ տղայ  
է. դնա ու գնա, Մարթայ ջան:

**ՄԱՐԹԱՅ,** Օսկանին:

Ա'ռանց ինձ նշնեցիր, էլլի. քնւ ասուծի մարթ իս,  
ախար, Է... (Արութինին: ) Արա, Վարթիան, նշան, նշան:

**ԱՐՈՒԹԻՒՆ,** իր մատանին տալով Մարթային:

Համեցէք, զէգի ջան, ու էքուց լաւ նշան կու

բերիմ:

**ՕՍԿԱՆ**

Հա, Էքուց սաղ բաղադիսանէն պիտիմ Օրթա-  
ճալա կօնալ անի բաղումը, ես նրանց հոքուն մեռ-

նիմ, գարդիմանդ տղէրը ին քի պէս:

Արութինը ձեռնափայտը վերցնում, մի կողմն է դնում:

ու այնուհետեւ Կէկէլի կողքից այլեւս չէ հեռանում:

## ՄԱՐԹԱՅՑ, առանձին:

Քա, իմ փալը կուղիան էր... (Մատանին դնելով Կէկէլի մատը:) Ծնահաւուր ըլի, Կէկէլ ջան... (Համբուրգում են: Յետոյ դիմելով Արութինին:) Բախտաւուր ըլիք, վուրթիք. ըմբով կշտանաք. Աստաւ օխնանքն ըլի ձիղ վրայ...

## ՕՍԿԱՆ

Ամին:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Զիզմով, իմ մէր... (Մարթան համբուրում է Արութինին, իսկ սա—նրա ձեռք:) Զիր օխնանքն անպակաս ըլի միզմէն. Օսկան Պետրօվիչին սաղ ունենանք... Հէստի պահիմ սրան, իմ մէր, գունցոր իմ աճկի լուսը. դուք արխային կացէք:

## ՄԱՐԹԱՅՑ

Սէր ու միաբան պահէ ձիղ Աստուծ... Կամարկատարն ըլի ձիր քօմազը...

Մի քանի վայրկեանից յետոյ շտապով մօտենում է ձախ գուանը, այնտեղից դէպի կողքի սենեակը՝ իբր թէ մէկին հրամաններ է տալիս եւ շուտով վերադառնում է:

## ՕՍԿԱՆ, նոյն միջոցին:

Քու դարդիմանդ սրտին մեռնիմ, Արութին ջան, փեսայ ջան... Ա'րի, լոթիանա մէկ էլի պոօշտի անինք... (Համբուրգում են:) Կէկէլ ջան... (Համբուրում է Կէկէլին, սա—նրա կուրծքն ու ձեռք:) Ա'պիսի... Ա'ստուծ տայ ձիղ, ինչ իմ սիրտը գ'ուզէ... (Կէկէլին:) Գուն դիպիս, վնրթիք, յօրէսի դէնը... Վա, նստեցէք, է... Նստում են՝ Կէկէլն եւ Արութինը բազմոցի վրայ, իսկ Մարթան—մօտի բազկաթոոի վրայ:

## ՏԵՍԻԼ ԻԲ

ՆՐԱՆՔ, ԳԻՏԵՍԻ

ՕՍԿԱՆ, ԳԻՏԵՍՈՒՆ, որ ձախ գոնից բերում է սկուտեղով բաղցրաւենիք, միրդ եւ խմիչք բոլոր պարագաներով:

Ա'րէթ... (Ձյօտ... — Է'ս թէնը...) (ԳԻՏԵՍԻՆ սկուտեղով դնում է սեղանի վրայ եւ անցնում է բեմի աջ կողմը:) Համեցէք, Արութին ջան... (Արութինը վերցնելով բաղցրաւենի, փոքրիկ ափսէով տալիս է Կէկէլին, որ լուռ ողջուրաւենի, փոքրիկ ափսէով տալիս է բաժակները) Էս ձիր նում է. իսկ ինըը, Օսկանը, լցնում է բաժակները:) Էս ձիր կինացը... (Բաժակը բարձրացնելով:) Կինօք ըլիք, վնրթիքիք... (Արութինը, Կէկէլը եւ Մարթան ոտքի են կանգնում, վերցնելով մի-մի բաժակը) Ա'նհատ ու անպակաս նում, վերցնելով մի-մի բաժակը:) Ա'նհատ ու անպակաս անէ Աստուծ իր օղորմութինը ձիղ դիփոնիտ վրայ... Բաժակը դարձնում է նաև դէպի հանդիսականները:

## ՄԱՐԹԱՅՑ

Երգար օր ունենաք, վնրթիք. արժանի ըլինք ձիր թագին ու փսակին...

ՕՍԿԱՆ, միջնիեն Արութինը եւ Կէկէլը լուռ ողջունում են:

## ԱՍՏԱՆԴՎ...

Ամենըը իսմում են միմնանց կենացը. Կէկէլը բաժակը միայն մօտեցնում է շրթունքներին: Յետոյ Մարթան, Կէկէլը եւ Արութինը կրկին նստում են իրանց տեղերը:

ՔԻՏԵՍԻ, նոյն միջոցին, առանձին:

Ամդէնս քայի քէ գոռնիշնավթ. թու ախլաց էլիք դամացիսինկվա, ցէմիթ դամրէրավս էս օչախնէք քօրի: (Ձթցնը յալո յը օռշնո՛՛նացու; ու աճլաց քօրի:)

յոջյըր օքմացնցա, օյմոտ ցամեցրաց յև ռջաճյուղու! — Սրանք էս է ալիշկան նշնիլ ին. թէ հիմի էլ մէ չէր փռացացի, ծեծելով կու սպանէ ինձ էս անքանդը:)

Դուրս է փախում խորքի դռնից եւ այնտևոց ծառուկ նայում է:

ԱՐՈՒԹԻՒՆ, ՕՍԿԱՆԻՆ:

Աբան, իմ հէր, 'ես իմ մուրազին հասայ, վունցոր օխնեցիր. հիմի տրէատրի իջարի վրայ ինչ իս առւմ:

### ՕՍԿԱՆ

'Ես էլ իմ մուրազին հասայ, վուրթի, վուր քի սկս փեսայ ճարեցի ինձ համա: Թրէաթրի իջարի վրայ էքուց կու խօսինք կանանչ ու նարգիզ շար-իւէլիվնում սէյիր անելիս... Մէ ճաշ սարքիմ էնդի ձիզ համա զուլարի տանձի տակը, մէ ճաշ զուռնով ու զուդուկով, վուր — անտիֆոնի... Ա'փուտս, վուր վարթ մանուշակի վուխտն անց կացաւ. ամա ումիկ ունիմ՝ էլի լաւ քէփ անենք... Հիմի ջեր մէ լէզգեվար խաղանք ձեռաց... (Առանձին:) Տօն, իմ իջարէն իմ ախշիկն էր. թրէատրի մօզօնողին էլ ինչ ասիմ... (Արութինին ու Մարթային:) Աբան, մէ տաշի խվեցէք, ուզում իմ խաղա... (Սազանդարներն ածում են լեզերէն պարի եղանակը: Պարում է: ) Վուրն էլ էքուց Օ'թաճալա թամաշա արէք... (Դէպի հանդիսականները:) 'Ես վուր ասի' «Գիշիրվան սարըլ խէր Է»: (Միւսներին:) Հիմի ձիր հիրթն է: (Ամենքը կարգով պար են զալս սաղի ներդաշնակցութեամբ: Պարը վերջանալիս, տեսնելով Քիտէսուն խորքի դռանը:) Աբան, Քիտէսավ, էրթի շէ-

նէրուլազ: (Օծա, Ֆուլյազ, յրտո Ցենցօժրաց.—Աբան, Քիտէսի, մէ քու հանգը: ) (Քիտէսին յանկարծ ներս է վաղում, զլուխ է տալիս նշանածներին եւ հիանալի պարում է: ) Համար կարգ չօխաս գտուքէր: (Յա, ցոհաջոր! Եցալ յրտ յարջ հոճաս ցահոյցը.—Համար կարգ չօխաս կու բախչիմ քիդ: ) Համար դոչախի մեծ ծարպիկութիւն է ցոյց տալիս: Օսկանը եւ Արութինը ծափահարում են նրան:

Վ Ե Ր Զ

ԱՐԲՍԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եղևու:	Տող:	Տպուած հ:	Պիտր հ:
2	7 վերելից	ի՞նչ	ի՞նչ
«	9 «	ի՞նչ	ի՞նչ
3	1 ներենից	վա,	վա.
«	12 «	ի՞նչ	ի՞նչ
5	13 վերելից	ուռիլ	մւռիլ
6	1 ներենից	ճիանուրլ՛դ	ճիանուրլ՛դ
10	« վերելից	օչովու	օշովու
«	12 «	չամ	չամ
13	« «	անում	անելով
«	1 ներենից	նկ	նկ
14	2, 3 վերելից	աւտալու	աւտալու
17	1 «	ի՞նչ է	ի՞նչ է
«	5 «	ըլի	ըլի
«	10 «	չմօդ	չմօդ
18	6 «	գէլ	գէլ
20	4 «	թարի	թարի
«	9 ներենից	Արութին	Արութին
22	4 վերելից	արի	արի
«	6 «	մւր	մւր
«	10 «	չին	չին
«	11 «	խաղմ	խաղմ
«	8 ներենից	խաղան	խաղան
24	7 վերելից	չլմ	չլմ
« «	10 ներենից	ի՞նչ	ի՞նչ



## ԳՈՅԲՐԻԵԼ ՍՈՒՆԳՈՒԿԵԱՆՑԻ

Թ Ա Տ Բ Ո Ւ Ա Կ Ա Ն Գ Բ Ո Ւ Ա Ծ Ն Ե Բ Ը

թ. կ.

ԳԻՇԵՐՎԱՆ ՍՈՅԲՐԸ ԽԵՐ է, կատակ մեկ արարուա-	
ծով. եւրոդ սպազրութիւն, ուղղած . . . . .	— 30
ԿԱԹԱԲԱԼԱ, կատակերգութիւն չուս արարուածով.	
եւրոդ սպազրութիւն, ուղղած . . . . .	— 50
ՕՍԿՈՆ ՊԵՏՐՈՎՎԵԶՆ էն ԿԻՆՔՈՒՄԸ, կատակ մեկ	
արարուածով. եւրոդ սպազրութիւն, ուղղած . .	— 20
ԵԽՈՅԼՆ կամ ՆՈՐ ԳԻՇԵՐԽԵՐ, կատակ եւկու արա-	
րուածով. . . . .	— 40
ԵՎՐ ՄԵԿ ԶՈՀ, կատակերգութիւն նիմա արարուածով.	
եւրոդ սպազրութիւն, ուղղած . . . . .	— 1
ՊԵՓՈ, կատակերգութիւն եւել արարուածով. եւրոդ	
սպազրութիւն, ուղղած . . . . .	— 50
ՔԱՆԴՈՎԸ ԶԶԱԽ, կատակերգութիւն եւել արարուա-	
ծով. եւրոդ սպազրութիւն, ուղղած . . . . .	— 50
ԱՄՈՒՆԻՆԵՐ, կատակերգութիւն չուս արարուածով.	
եւրոդ սպազրութիւն, ուղղած . . . . .	— 1
ԲԱԼԴՆԸԸ ԲՈԽԶԱ, կատակ եւկու արարուածով . .	— 40

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՖԻՌԱՍԵՐԻՆԵՑ

ԺՈՒԺ ԳԱՆԳԵՆ, կատակերգութիւն եւել արարուա-

ծով, նեղինակութիւն ՄՈՂԻԵՐԻ . . . . . — 40

Վաճառուամ և՛ Թիֆլիզուամ՝ կենցրուսպան, ԿՈՎԿԱՍԵԱՆ  
և՛ „ԳՈՒՅՅԵՐՆՍԲԵՐԴԻ“ գրավաճառանցներուամ, և՛ Բագռուամ  
Տիկին Մ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ գրավաճառանցուամ: